# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<24>> հունիսի 2014թ. N 26

Ք.Արմավիր

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի „բ” ենթակետով, 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշումը, 2014 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցներում կրթական ծրագրերի ուսուցման գծով ծառայությունների իրականացման նպատակով*

***որոշում եմ՝***

1. *Հայաստանի Հանրապետության 2014 թվականին պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին <<Նախադպրոցական կրթություն>> ծրագրի տնտեսագիտական դասակարգման <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> հոդվածով նախատեսված 70000000/յոթանասուն միլիոն/դրամ գումարից 55758500/հիսունհինգ միլիոն յոթ հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր /դրամ գումարը ,տարրական ընդհանուր կրթության ««Հանրակրթական ուսուցում»» ծրագրի տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով նախատեսված 2119829100/երկու միլիարդ մեկ հարյուր տասնինը միլիոն ութ հարյուր քսանինը հազար մեկ հարյուր/դրամ գումարից 2119208500/ երկու միլիարդ մեկ հարյուր տասնինը միլիոն երկու հարյուր ութ հազար հինգ հարյուր / դրամ գումարը,հիմնական ընդհանուր կրթություն «Հանրակրթական ուսուցում» ծրագրի տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով նախատեսված 2557202100 /երկու միլիարդ հինգ հարյուր հիսունյոթ միլիոն երկու հարյուր երկու հազար մեկ հարյուր/ դրամ գումարից 2554779500 /երկու միլիարդ հինգ հարյուր հիսունչորս միլիոն յոթ հարյուր յոթանասունինը հազար հինգ հարյուր/ դրամ գումարը, միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթության «Հանրակրթական ուսուցում » ծրագրի տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով նախատեսված 1340204000/մեկ միլիարդ երեք հարյուր քառասուն միլիոն երկու հարյուր չորս հազար /դրամ գումարից 1272393900/մեկ միլիարդ երկու հարյուր յոթանասուներկու միլիոն երեք հարյուր իննսուներեք հազար ինը հարյուր/ դրամ գումարը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության թվով 112/մեկ հարյուր տասներկու/ հանրակրթական դպրոցներին աշակերտ թվերին համապատասխան վերաբաշխել համաձայն հավելվածի:*
2. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին (Փ. Կարապետյան) սահմանված կարգով իրականացնել ուսուցման ծառայությունների գնման պայմանագրերի կնքումը;*
3. *Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:*

*ՄԱՐԶՊԵՏ՝* *Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*